


**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ԵՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱԿՑԻԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

01.05.2014 13:43



ՀՀ փաստաբանների պալատը, Պալատի երիտասարդական խորհրդի և փաստաբանական դպրոցի ունկնդիրների մասնակցությամբ մայիսի 1-ին՝ Աշխատանքի օրվա կապակցությամբ, Հյուսիսային պողոտայում իրականացրել են իրազեկման ակցիա, որի կարգախոսն է՝ «պաշտպանված աշխատող, բարեխիղճ գործատու» հզոր հայրենիք»:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը աշխատանքի օրվա կապակցությամբ շնորհավորելով աշխատավորներին նշել է. **‘թե՛ հայ աշխատողը և թե՛ գործատուն պետք է իմանան, որ իրենք պաշտպանված են: Կոչ եմ անում պաշտպանել սեփական աշխատանքային իրավունքները’**: Ըստ Արա Զոհրաբյանի աշխատանքային վեճերում դատական նախադեպերը հիմնականում աշխատողի օգտին են: Երիտասարդ փաստաբանները շուրջ 500 թռուցիկներ են բաժանել քաղաքացիներին և պատասխանել նրանց հուզող հարցերին: Թռուցիկներում հակիրճ ներկայացվել են իրավունքները և աշխատանքային կարգապահությանը վերաբերող դրույթները.

**ԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ.**

1. Անվնաս պայմաններում աշխատելու ,
2. Աշխատավարձ ստանալու ամբողջական և ժամանակին (գիշերային, արտաժամյա և հանգստյան օրերին աշխատելու դեպքում ստանալ արտաժամյա հավելավճար),
3. Աշխատանքի ընդմիջման
4. Արձակուրդի
5. Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստ ստանալու,

**ՄԻ ՄՈՌԱՑԻՐ**

1. Ենթարկվել աշխատանքային կարգապահությանը,
2. Ժամանակին աշխատանքի ներկայանալու ,
3. Գործառույթներդ ու գործատուի այլ հանձնարարությունները բարեխիղճ կատարել, Հարգելի քաղաքացի այսօր ճանաչելով ու պաշտպանելով սեփական իրավունքները՝ բարեխիղճ կատարելով աշխատանքային պարտականությունները՝ դու կայացնում ես գալիքի Հայաստանը:








Նախորդ նորությունը: ՀԱՐՑՈՒՄ LURER.COM ԼՐԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԻՆ


### Առաջարկվող նորություններ



**25.10.2013** ՌՈՒՍԱՍԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻԼԴԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



**06.11.2013** ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ



**11.11.2013** ԱՄՓՈՓՎԵԼ Է ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆԻ ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ ԿԱՏԱՐԱԾ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ



**12.11.2013** ՍՏԵՂԾՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```